

# Բ Ա Ն Ա Ս Է Ր

« ԶԱՆՈՒՄ »

« ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ »

Թ ՏԱՐԻ 1907	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռբլ. = 3 դոլար :	ՊՐԱԿ. Բ. N° 2.
----------------	---	-------------------

## ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼ

Աշխարհի ո՞ր թուղ ու մութ հայրում հայ մամուլը՝ ներկայացուցիչ չէ ունեցել։ Սրան կարելի է պատասխանել՝ ամենտեղ, նոյն իսկ Սինդակուր կղզու վրայ։ Եթէ մենք աչքի տալով դռնենանք այն հանգամանքը, որ Ե—Յ հայ եղած, քաղաքում լրագիր ենք ունեցել, պիտի հաւատանք որ հայաշատ Կովկասում հաղաքաւոր, պարբերականներ ենք ունեցել, սակայն այդ այդպէս չէ։

Եթէ՝ Կովկասահայ անցնալ մամուլը չնչուէր, նա հրաշքներ կը գործէր եւ՝ մենք այսօր Կոնստանյինք լրագրութեան համար պատրաստ մտադրուող եւ որ գլխաւորն է հայ լրագրութիւնը ապահով կը լինէր, սակայն... ցինդուբան, այդ ամեն ինչ կլանող գիկոտատօրան, հողար ու մի պոզ ունեցող հրէշը խաւարի ստուերով համակուած խեղդում էր ամեն ինչ եւ մամուլը ստիպուած էր համոզման գէմ դնալու։ Զնշում էին այնպիսի անմեղ բառեր, որ խմբագիրը ստիպուած էր ծիծաղելու։ Ահա մի օրինակ. Նոր-Դար լրագիրը Վան քաղաքից թղթակցութիւն է ապում եւ որպէս ընդհանուր անուն դնում է «Նանակ Հայաստանից», պի գինդորը ջնշում է «Հայաստան գեղագիտից» խօսքը եւ մակագրում արա այլեւս Հայաստան չկայ, այլ կայ Տանկաստան։ Այսպիսով այլ եւս չը կայ Ռա. կեղոնիա, չկայ Արդաստական, չը կայ Վրաստան, եւ չկան ու չկան ինչ գարող եւ ասել, երբ Պէլէ-Գօլիցիներն նկատուած չըջանն այդ էր թելադրում։ Նոր հայ լրագիր հրատարակելու իրաւունք փնդրելն էլ մահացու մեղքերի չարքն անցաւ եւ 60 երկար տարիներ լքնթացքում Կովկասը քուեց 29 պարբերական հրատարակութեան։

Բայց սկսուեցաւ. ազատարար շարժումը, սկսուեցաւ եւ մատուր շարժումը, բայց ես կասեմ, որ անցեալ մամուլը ճշշուած հանգամանքներում շատ աւելի բարձր էր պահուած իրեն, քան ներկայ մամուլը, որ վիժուածք է, ողորմելի մէ խնդանք է եւ ուրիշ ոչինչ: Օրինակի համար մենք կարող ենք մէջ բերել հայ հասարակական այն լուրջ պայտուր որ ստեղծեցին «Մշակ»-ն ու «Նոր-Դար»-ը, մինչդեռ ներկայումս եթէ կայ պայքար, նրա ետեւ կայ եւ մահուան ու ծեծի սխտր պատկերը, նախ կին պայքարը գիտակցական էր, այժմեանը բռնակալական, եւ այս բոլորից ծագում է այն հասկացողութիւնը, որ ներկայ կովկասացի մամուլը ապականում է մարդոց եւ... ազգի ազգային կործանումը, փութկոտութեամբ շտապեցնում: Չեմ ուզում լինել կողմնադէպ եւ միմիայն մի նպատակով սկսեցի գրել այս հարցի մասին — Հայի առաջ զնեւ իմ ստեղծագործութեան հրաշագեղ հայելին:

# ԿՈՎԿԱՍ — 1846—1847

1844 թ. նոյեմբեր 17-ին Կովկասի փոխարքայ Նշանակուեց Կոմս Վերխայիլ Սիմեոնովիչ Վորոնցովը, որ 1845 թ. մարտի 25-ին, Թիֆլիսի Կոմսի Կովկաս գալը նոյն երկրի համար մի նոր դարեւորջան բուցեց եւ փոխարքայի ամբողջ գործնութիւնը պարզ ցոյց է աւելի, թէ ի՞նչ աստիճանի յառաջադէմ է եղել այդ մարդը, նա Կովկասի եկեղեցիներին եւ ժողովրդին ծառայելու համար եւ այսպէս էլ դուրս է եկել Ուրուխտեւ մենք խօսելու ենք միայն մամուլի մասին, ուստի հ. թողնում ենք Վորոնցովի գործնութիւնը եւ մեր առարկայի վերաբերեալ միայն խօսում:

Կոմս Վորոնցովը զբաղանութեան զարկ տուեց նախ «*Նաւկադսկիյ Կալենդար*» (Կովկասեան օրացոյց) հետաքրքիր եւ կարեւոր հրատարակութեամբ, իսկ 1846 թ. յունուար 5-ից սկսուեցաւ հրատարակուել ուսաներէն «*Կաւկազ*» շաբաթաթերթը խմբագրութեամբ Օսիպ Իլիչ Կոնստանտինովի, նոյն այս Կոնստանտինովը ստեղծեց եւ առաջին հայ պարբերութիւնը՝ «*Կովկաս*»-ը, «... Պարոն Կոնստանտինովն երբ կամեցաւ ի լոյս ածել զօրագիր Ռուսաց, չէր մտադիր ձեռնամուխ լինել հայկականին, նախ զի ինքն չգողով հայ անձանք էր լեզուի Հայոց, եւ երկրորդ՝ զի չգիտէր թէ Հայք ըստ մեծի մասին վաճառականք են եւ կարգաւոյ ժամանակ չունին: Բայց եթէ յապաչն չըջեցան միտք նորա եւ կամք եղեն նմա ի լոյս ածել եւ զօրագիր մի ի լեզու Հայոց՝ այն ամենայն խորհրդով Հայազգի գործակցաց, նորա եւ արդեամբ յաջողեցաւ...» (Կովկաս 1846 N° 36): Այստեղից պարզ է, որ Կոնստանտինովը

հայ դործակիցները հետ առեղծեք է հայ առաջին պաշտօնականը, Բայն ո՞րք են այդ դործակիցները եւ ի՞նչպէ՞ս յղտցան մի այդպիսի, գեղեցիկ միտք:

« Սա էլ մի փոքրիկ պատմութիւն ունիս

1830 թ. Կարնոյ զաղթականներից Սխալցիտայից Տփիսիս էրն՝ եկել Յակոբ վարժապետ Կարինեանը եւ մի վաճառական՝ Մկրտիչ Էնֆիաճեանն Առաջինը մեզ ամենքիս լաւ ծանօթ է. նա է հեղինակ այն նշանաւոր ազգային « Շուշանիկ » ողբերգութեան, որ սկիզբահանող պատերազմը անուան տակ ներկայացուեւ է հայ բեմի վրայ եւ որը ահագին հալածանքի է ենթարկուել Ռուսաց պետութիւնից: Կարինեանը կրթուել է Կարնոյ Կարապետեան դպրոցում (ծն. մտ. 1813 թ. Կարինում) եւ 1838 թ. Ներսիսեան դպրոցում ուսուցիչ է եղել, Գոնսթատոյի մէջ էլ ունեցել է ատենադպրի պաշտօն: Ներսիսեան դպրոցում երկար մասնակ պաշտօնավարեց եւ յետոյ զբաղուեցաւ կաթաղապարթեան: 1873 թ. իշխութեան թեմաների քաղնիսի կապալառու էր եւ թուրք, Լորդաքոզի բնակչը սպանել առաին բաղնիքների փողոցում: Նրկորդը՝ քաջանք է Էնֆիա (բանիթի) ջթափոշի) ձախտը վաճառական է. որի թաւեւորը աշխատի լիտում ծխախոտի գործարան ունիս: Սա 1837 թ. վերաբանան գաղտնի հաղկէ պանրավաճառի խառնութեանց եւ որովհետեւ զուտ շուտ է Պալիս էր գնում եւ գալիս, սկսեց հայերէն գրքեր բերել եւ վաճառել: Կիրակի օրերը Մկրտիչ որդի Յաւաթըր տօնավաճառում գրքեր էր վախում: Դրքերը, յայտնի՝ բան է, Զաւրեանի քերականութիւնն էր: Յետագայի իմաստասիրութիւնը, Պողոսի թղթերը եւ այլն, մասնաւոր ընդհանրութեամբ Մկրտիչ խառնութեւն այն դեր էր խաղում, ինչ որ Կ. Պառնում Նշանաւոր Քիթապչի Մարգարի գրախառնութեւն Յոյ գրախառնութեւն գաղտնիսիս առնէր մինչ իսկ 70ական թուականներին եւ Աւետիք Էնֆիաճեանին էր պատկանում: Իսկ Մկրտիչ միւս արդին Զաւրեանի միտքաւոր գաղտնիքն բացեց, թէպէտ գրախառնութեանց էր մտք ունէր: 1854 թ. այս գրախառնութեան արտատնտեսանեան հայ թերթերի համար քառանորդութիւն բացեց (յայտարարութեան խղճովն պիտեակը հայ մեք ձօք) եւ տարածում էր հետեւեալ թերթեր. 1) Լեւոնայոյ Առաքանեան (Զմբակ-Նիս), 2) Բաղրամիկ, 3) Հայաստան (Կ. Պոլիս) 4) Լեզուական Առաքանեան, 5) Շուրպա, 6) Դատնեան, 7) Բաւարտ Կ. Պոլիս, 8) Բաւարտ Աք. Սահակեան եւ յետոյ էլ Մեղր (Կ. Պոլիս) Հայրենաստեւ յա այլն:

Գառանական թուականներին այս գրախառնութեւն մի աւանդ Սաղովարան էր եւ մտքերի փոխանակութեան հեղինակ: 1839 թ. Էնֆիաճեաններն սկսեցին օրացոյց հրատարակել, որ երկար տարիներ շարունակուեցաւ: Նրանք վաղուց Յակոբ վարժապետի հետ ծաղկող էին հայերէն թերթ հրատարակելը, նրանց համամիտ էր նաեւ Յակոբ Արղանեան հա-

մայրաքաղաքի և քաղաքային տնտեսական կառուցման հարցեր, սակայն վախճանում էին որ կարող են անյաջողությամբ հանդիպել և թողել էին այդ միտքը:

Երբ հայերեն «Կովկասի» հրատարակութեան հարցը ծագեց, ուստի թերթի խմբագիր Կոնստանտինովը զիմեզ Արզանեան Յակոբին (որ այդ ժամանակ հայ լեզուի գրաքննիչ էր նշանակուած) գլուխ բերելու հայելուն հրատարակութիւնը Արզանեանը Կարենցի Մկրտչի խանութում համաձայնութեան եկաւ Յակոբ Կարենեանի հետ, էնֆիստեաները խոստացան ամեն ջանք դրած դնելու այդ թերթը տարածելու եւ 1846 թ. յունուուար 12-ին լոյս տեսաւ N<sup>0</sup> 1, որի վրա գրուած էր. Կովկաս Կաղէթա Գաղաքական և Բանասիրական, բաժանի յիւրաքանչիւր եօթնեկի 'ի յարաթ աւուրս Տարեկան գին 'ի Թիֆլիս 7 մանէթ արծաթ, առաքմամբ 'ի քաղաքս եւ հասուցմամբ 'ի տունս 7 մանէթ 50 կոպ. արծաթ:

'ի Տպարանի հոգեւոր գործիչ Հայոց Տիմիսայ:

Չորրորդ երեսի վրայ ահա ինչ են աւում խմբագիրներ Յակոբ Կարենեանը եւ Յակոբ Արզանեանը:

«Բազում անձինք, 'ի վաղուց հետէ բնակեալք 'ի Կովկաս, բաւական չափ գիտեն զայս կողմն կամ զմասն ինչ սորա, եւ ունին ասեկոյն զգիտելոյ արժանի գրաւոր ծանօթութիւնս, նկարագրութիւնս բարուց եւ սովորութեանց Կովկասու ազգաց, եւ զպատմաբանական տեղեկութիւնս զնոցանէ: Բեղակցիայն Կովկաս անուն Կաղէթայի ցանկալով առաջի առնել ընթերցողաց իւրաց զամենայն գիտելոյ արժանի տեղեկութիւնս, որով կարելի իցէ ճշտագոյն նկարագրել այս կողմն, յոյս ունի թէ ոչ ոք 'ի նոցանէ չի խնայել հաղորդակցիլ այս օգտաւէտ ձեռնարկութեանս, եւ զարդարել զթերթն նորա իւր աշխատասիրութեամբ: Բեղակցիայն կընդունէ զամենայն այդպիսի նուէրս կատարեալ շնորհակալութեամբ: Եւ եթէ այն յօդուածքն լիցին համաձայն նպատակի Կաղէթայի, աշխատելը լինի ապագրել, իսկ եթէ համաձայն չիցէ նպատակի, կը դարձուցանի առ ուղարկօղն Այդպիսի գործածոց նիւթքն պէտք է լինին, պատմութիւն, քաղաքագիտութիւն, ուսումնական հետազննութիւնք, ստորագրութիւնք հնութեանց, նորանոր գիտք, պատերազմական բանք, պատմութիւնք, քաղեալք 'ի ապեալ մատենից եւ յաւանդութեանց տեղոյս, ազգային բանաստեղծութիւնք, նաեւ որպիսի եւ իցէ նիւթք ըստ այսոյիկ առարկայից Արեւելեան, կամ Աւրոպական լիզուաւ: Որք ցանկան հասուցանել զլուրեանց ձեռնագիրն, բարեհաճեսցին առաքել 'ի Թիֆլիզ յանուն յօրինողի Կովկաս անուն Կաղէթայի»:

Ահա ծրագիրը. եւ Կովկասը ամենայն հարազատութեամբ պահպանել է իր ուղղութիւնն ու ծրագիրը:

N<sup>0</sup> 1-ի բովանդակութիւնը.

ա) Բարձրագոյն Հրովարտակք:

բ) Բարձրագոյն հրամանք՝ որք հային տու պարտադրական կադատ վարութիւնն:

գ) 'Ի Յօրինօղէ Կաղէթայիս:

դ) Ներքին լուրք — Թիֆլիս 'ի 22 Դեկտեմբերի

ե) (Մի յայտարարութիւն, որով ժամացոյցներ ուղղելու համար փոխարքան հրամայել է թնդանօթ արձակել կէսօրին):

զ) Հանգէս մտանելոյ 'ի Թիֆլիզ Սրբազնասուրբ Կաթողիկոսի աւմենայն Հայոց եւ Մայրապոյն Պատրիարքի Արարատեան Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի:

է) Մահ Մայեվսկի Պօրուպիկի:

բ) (Մրագրի յայտարարութիւնը):

թ) Ձեռնակութիւն 'ի Թիֆլիզ (մուշակոյի):

ժ) (Յայտարարութիւն փոխարքայի հրամանի մաքսատնից քաղաքը ապրանքը բերելու մասին):

Լրագրի մէջ գործ են անուած երեք տեսակ գրեր. N<sup>0</sup> 8, 10 եւ 12 հինձեւի խորագրերով եւ չեղագրերով: Թուղթը ժամանակի համապատասխան լաւ, տպագրութիւն մաքուր: Ներսը բաղկացած է երեք մեծ սխանակներից:

1846 թ. «Կովկաս»ը տուեց 49 համար, վերջինն էր Դեկտ. 14-ին:

«Կովկասի» մասին ցարդ հրատարակուած թեղեկութիւնները (Հայոց Պարբերական Մամուլը, Հայոց Մամուլը Ռուսաստանում եւ այլք) բոլորը հիմնովին սխալ են. բացի հանգ. Ա. Ներթեանի տեղեկութիւնից: Լրագրութեան պատմիչները չը գիտեմ ինչ հիման վրայ ընդունում են որ Մ. Պատկանեանն էլ 1846 թ. խմբագիր է եղած: Ո՛չ եւ ահա ինչն պէս:

### « Յայտարարութիւն Ջովկաս Կաղէթայէ »

«Աւանիկ մերձենայ երկրորդ տարի տպագրութեան 'ի Տփլիս Կովկաս անուն Կաղէթայի: Ծառք սրտի յայտ առնեմք պատուելի ընթերցողաց նորա եւ ամենայն ուսումնասիրաց ազգիս, թէ յընթացս ներկայ 1846 ամի այնքան սակաւաթիւ էին ստորագրողք Կաղէթայիս, մինչ զի յարգոյ Բէյաքտօր (քանաքաղ) Պարոն Յովսէփ Իլիչ Կոստանդինովն հաղիւ թէ կարաց վճարել նոքօք զծախսն տպագրատան, թո՛ղ չթղթոյ եւ զայլ քանի մի մանր հարկաւորութեանց զծախսն Հայադղի գործակիցք նորա, որք յազգասիրութենէ շարժեալ անդադար ֆանային հաղորդել նմա ըզթարգմանութիւնս կամ զչարադրութիւնս իւրեանց, թէ եւ առ պակասութեան արդեանցն մնան առանց ինչ վարձու, բայց առաւել քան զչափըն վարձատրեալ համարին զանձինս, եթէ պատուելի ազգն իւրեանց

զախորժ եւ զօգտաւէտ նիւթ ընթերցանութեան 'ի ձեռս ունելով՝ Դսւաց  
օգուտ ինչ քաղել անախի

«... Կարգ բանին եւ նոյն իսկ ճշմարտութիւնն պահանջէ խոստո-  
ւլանիլ, թէ Կաղեթայի յատաջադիմութեան առաջինն եւ գլխաւոր յոյսն  
թէ Պ. Կոստանդինովի եւ թէ Հայազգի գործակցաց նորա էին վերապա-  
ռելիի Հոգեւորականք եւ Եկեղեցւորքն ազգիս, իսկ յի սոցանչէ Եւ  
ոմանք չեղին ձեռնաւոր օգնական լինելոյ, վստայութեան Եւ ստորագրու-  
թիւնն մնաց պակասաւոր եւ թերի»

«Պարոն Կոստանդինովն ո՛չ այնչափ երկուցեալ 'ի մասնաւոր վնաս  
սուց, զոր կրեաց նա յընթացս ներկայ 1846 ամի տպագրութեամբ հայ-  
կական Կաղեթայի, որչափ վշտացեալ ընդ այն՝ զի հայազգի գոյ ծնակիցք  
նորա չստացան զօգուտ ինչ՝ կամէր 'ի բնաց թողուլ զսպադրութիւն հա-  
յերէն Կաղեթայի եւ շատանալ միմիայն տպագրութեամբ Ռուսերէնին,  
այլ նոյն իսկ Հայազգի գործակիցքն ամօթ համարելով դաշն վառն ձե-  
ղիս, եւ մանաւանդ աշտոյիսում բազմահայ եւ ճոխ քաղաքի՝ խնդրեցին  
զնա շարունակել եւ յառաջիկայ 1847 ամի. գո՛հ եմք զմասնէ, յանձն  
էառ զայն, այլ տխուր դաշամբ՝ զի նա չհաղորդեցի մօրց Եւ Ելից Դե-  
րին, որպէս եւ տալազիւրի նիւթոցն, այլ զնոյն առցեն հմանք՝ 'ի Հա-  
յոց, որք գլխակ զուով Հայ լեզուի կարօղը իցին շարունակել զայն, եւ  
զօգուտն կամ զվնասն 'ի մասին ծախուց առցեն յանձն եւ զի մեք երկուցեանս  
Արդդժուան իմն է) յօրէ ունտի տպագրութեան Հայկական Կաղեթայից  
դատք նմին պաշտպան խորհրդովք, տպագրելի նիւթովք, յորհրդով  
զոմանս ի ստացումն Կաղեթայի, քրքագրութեամբք եւ արտփք միջոցք,  
ուստի եւ յայս նուագ նուիրելով սիրելի ազգի մերում զվաստակ մեր Կ-  
զմանս՝ յանձն առաք շարունակել զտպագրութիւն Կաղեթայիս եւ յառա-  
ջիկայ 1847 ամն, յուսալով թէ ազգն մեր յոծարակամ ընթերցանութեամբ  
նորին ունի վարձատրել զորաից մերով գոծարութիւն Զօգուտ եւ զյաչ  
օրագրոց աւելորդ համաքեմք զմանրամասնաբար հաղորդել մերում ազգի,  
միայն զայս ասեմք, թէ մի 'ի գլխաւոր միջոցաց ազգային յատաջադի-  
մութեան է տպագրութիւն եւ ընթերցումը չրապրոց, որքան միւրթաբու-  
թիւն է մեզ, զի 'ի ժողովի ռաբիք նստեալ ոմանք քարեմիս հայազգեաց,  
փոխանակ 'ի սնտոիս պարապելոյ, ընթեռնուն զԿաղեթայս եւ զրօնուն  
նքօք մաւ է մեզ, զի սակաւաթիւ Հայք բնակեալք 'ի Զմիւրին եւ 'ի  
Հնդկիս 'ի լոյս անհաղ զնորանոր բրադիւս՝ Զանաւ լուսաւորել զմիտս  
ազգի իւրեանց, իսկ մեք բնակեալ յանգործաւէտ Տէրութեան, յայսպի-  
սում հայաշատ եւ ճոխ քաղաքի, ո՛չ կարասցուք զտանել զպաշտպանս,  
որք ձեռնտու լիցին զամս քանի մի, տպագրութեան միոյ եւ եթ Հայ-  
կական Կաղեթայի ... »

« Այնուհետեւ խօսում են լրագրի նշանակութեան մասին եւ այն առթիւ, որ գաւառական գործակալութիւններ են ունենալու :

« Եւ Կազմեթայն յընթաց 1847 ամի ունի ըստ առաջնոյն ապագայի թիւք մի 'ի շաբաթն 'ի վերայ ազնիւ սպիտակ թղթոյ :

Նիւթք նորա հղիցին .

ա. Կարգադրութիւնք Կառավարութեան Ռուսաց :

բ. Ներքին եւ արտաքին լուրք :

գ. Գրուածք պատմաբանականք, աշխարհագրականք եւ բարոյականք :

դ. Ուսանաւորք, յայտարարութիւնք եւ այլ արհրժ եւ օգտաւէտ կարգաւորչ հատուածք :

Տարեկան գին ստորագրութեան մնայ նոյնն, այն է, եօթն մանկթ 'ի տեղւոջն, իսկ առաքմամբ յայլ քաղաք, եւ հասուցմամբ 'ի տունս եօթն մանկթ եւ կէս Ուրք կամին ստանալ զայն, կարեն ստորագրիլ բնակեալքն 'ի Տփլիս 'ի Տփլիսու փոստայն, եւ բնակեալքն յայլ քաղաքս առ նշանակեալ գործակալս :

Սրանից յետոյ գալիս են խոստովանել, որ թերթը աւելի ընարուած նիւթեր կը պարունակէ, կը հրատարակուի կանոնաւոր, միայն թէ ազգը խրախուսէ :

Ստորագրել են՝ Յակոբ Արզանեանց

Յակոբ Կարենեանց :

(Կովկաս 1846 թ. № 36, էջ 135—136) :

Ահա մի պատմութիւն, որի առաջ պիտի լռեն բոլոր հեղինակները լրագրութեան պատմութեան :

Մինչեւ լեզուի մասին խօսելը, ես կարեւոր եմ համարում ասել եւ այս, որ յերաւի 1847 թ. վերջերը մի քանի համարում գլխաւոր գործակիցն եղել է Միքայէլ Պատկանեանը, բայց աւելի շուտ գլխաւոր աշխատակից :

Բացի սրանցից Կովկասին աշխատկցել են՝ Մ. Լ., Սարգիս վարդապետ Սանահնի Վանուց, Համբարձում էնֆիածեանց, Գէորգ Տէրտէրեանց, Ռոստոմ Երզնկեան, Ն. Տ. Շ. . . նց, Աբէլ վ. Մխիթարեանց, Գ. Շ. Վ. Կ. Գ. Բէլախեանց, Կարապետ վարդ. Շահնազարեանց, բժիշկ Մարտիրոս Դուգով, Գորեցի Ս. Աղէքսանդրոս Տէր Ստեփանեանց, Մովսէս Զօհրապեանց, Դաւիթ քան, Ճէր Աղէքսանդրեանց, Գրիգոր քան, Դուգով (Ղալարից), Միքայէլ Շաղինեանց, Ս. Լօրիս Մելիքեանց, Ա. յարկաւաք Ստեփանոս Մանգլինեանց, Գաբրիէլ քան, Պատկանեանց, Ի. յ. ք. Սանատունի, Ս. Մ. ք.

Մի մեղադրանք, որը կարծում եմ իրաւունք ունիմ եւ բարկելու հայ լրագրութեան պատմիչներին վրայ, թյոք նրանց մարդարեւ թիւնն է,

որ այդ պարոնները աչքի առաջ «կովկաս» լրագիրը չո՛ւնենալով մարգարէացել են թէ նա պաշտօնական չոր ու ցամաք մի թերթ էր Եւ կասեմ որ նա իբրեւ անդրանիկ հայ լրագիր աւելի չառ է տուել, քան ներկայ մամուլը։ Նա ապել է պատմական, աշխարհագրական, փոքրվրդադարական, առեւտրական, քաղաքական, տնտեսական յոգուածներ, որոնք ներկայ դրչից էլ դժուարութեամբ կարելի է սպասել։ Միակ պակասութիւնը գրաբար լեզուն է, մերթ չառ է մօտենում աշխարհիկ լեզուին։ Եթէ մէկը կարգայ «կովկաս»ի համար 6-ից տպուող «Վիճակ կովկասու Մշակաց» յոգուածը նա պարզ կյայտարարէ, որ այդ թերթը ժամանակի սօցիալ-դեմոկրատներին օրդան պիտի եղած լինի։

Երևուի բանասիրականներին բաժնու մէկ-մէկ տպուում էր աշխարհիկ լեզուով յոգուածներ, որոնք աւելի զուարճանալու համար էին։ Օրինակ համար Ձեռում այսպիսի մի ֆէյլետօն կայ. «Համատեա խօսակցութիւն Երեւանցի Պօղոսի ընդ իւր Թիֆլիզեցի կին Կատօյին վասն իւրեանց դասեր Փօփօյի»։ Ընթերցողը պիտի երեւակայէ թէ ինչ զք ստոյգութիւն Երեւանցի Պօղոսի ու Թիֆլիզեցի Կատօյի խօսակցութիւնից։ Բայց խմբագիրներն այսքանով չեն բաւականացել, այլեւ տեղ ան տուել նաեւ աշխարհիկ լեզուով յոգուածներին, որոնք ճիշտ է մաքուր չեն, քայքայեւ կարող են մըցել 60ական թուականներին պործածելի հայ լեզուի հետ։ Աշխարհաբարով գրողները զխաւորապէս յայտնի բանասէր Գալուստ Շերմազանեանցն է եւ ոմն Բ.։

1847 թուից կովկասը գոյնը փոխեց։ Հէնց առնջին համարից նա աւելի զարդարուած է, վերնագիրը փոխուած է «կովկաս Էրագիր Քաղաքական եւ Բանասիրական» տպուած է ծաղկագրերով, վրան գրուած է երկրորդ տարի, իսկ բաժանորդագրութեան պայմանները տպուած են վերջին երեսի վրայ։ 1847 համար 1-ը լոյս տեսաւ Յունուար 4-ին։

Նախ քան պատմական տեղեկութիւնները ես կանգ եմ առնելու այն պատկերի վրայ, որ պ. Յարոյին եւ միւս պատմիչներին չգիտեմ ինչու զարմացրել է։ Վերջինն էլ ես առաջացած եմ այն, քանից, որ պատկերը շարունակաբար տպուում էր, քայքայեթ պատմիչները կարդային պատկերի տակ եղած Նոտ-ջարի վերնագրի կրող ոտանաւորը։ Վր հասկանալին, որ այդ պատկերը ներկայացնում է Նին եւ Նոր տարի՝ ծերունին Նինն է, մանուկը Նորը։ Ահա պատկերի՝ նկարագիրը. ամպերի վրայ մի ալեւոր Թեւաւոր ծերունի է նստած, իսկ նրա մօտ Նոյնպէս թեւաւոր Ժանուկ, հեռում երեւում են համաստեղութիւնը, լուսինը եւ աստղերը։ Ծերունու ծնկան վրայ մի թղթի վրայ ոլորուն օձ է նստած, որի վրայ մատնացոյց է անում ծերունին, իսկ միւս ձեռքը նա՝ մեկնել է դէպ Կրկ-



նային բնակիչները, իսկ մանուկը մի ձեռքով մատնացոյց է անում միւս ձեռքին բռնած քաղաքակիւնի շրջանակէ վրայ: Այս պատկերի վերեւ գրած է «նոր տարի», իսկ պատկերից անմիջապէս յետոյ գալիս է 15 վանկանի մի գրաքարոս ոտանաւոր, որ նոր տարու նկարագիրն է եւ բաւական խորհրդաւոր. այդ տեղ անագին զաղանթը կայ. հայի անցեալն ու ներկան է ներկայացրած մասամբ:

1847 թ. N° 1-ի բովանդակութիւնը.

- ա) Նոր տարի (պատկերով):
- բ) Բարոյական պատմութիւն (բանասիր.):
- գ) Բարձրագոյն Հրովարտակ:
- դ) Ներքին Լուրք:
- ե) Արտաքին Լուրք:
- զ) Աղեւայեղան (խաղերական):
- է) Նորատիպ Մատենաճո:
- ը) Լրագրի բաժանորդագրութեան պայմանները:

Այդ տարուանից սկսովկասաք բարեփոխուեցաւ եւ շնորհիւ այն բանի որ չկար այլեւս կոտանդիւնովը սկսուեցաւ մասնաւոր կատարեալ ազատութիւնը, այնպէս որ պետութիւնը ստիպուած էր համարները գործաւելու, ուստի եւ շնայած իմ ջանքերին այդ ապրուայ լրիւ սկսովկասա գտնելն անհնարին դարձաւ սկսովկասաք զոհ գնաց մի յիմք կրօնական վէճի, որ բռնկուեցաւ առաւ ու հաջ սկսովկասաքի միջեւ կուռւմ էին Գաբրիէլ քան Պատկանեանը եւ առաւ Լա Բոգոմոլովը (քանանաք?): Լ. Բոգոմոլովը մի շարք յոգածներ տարց աչին Ասիական Սարմատիան, «Աղուանիս», սկսովկասաք եւ այլն որոնց մէջ կրճոււմ էր մասամբ հայերի միտը եւ վերջը հայերին «նայվան» էլ անուանեց: Այդ հո' արդէն ահա տանելի էր հայ գրական մենամարտողի համար եւ նա նրա ազգը չեղուտ բանական վերլուծութեան ենթարկեց, որից երեւաց աւելի վատթարը — փոխմոյրի, քաջատրելով փոխ թուրքերէն իսկ մոյրի էլ հայերէն ուրով նա մօլութիւն խաղն էր վերցնում: Չը նայած Արդանեանի թափած աշխատութեան, թերթը գրաւուեցաւ եւ փակուեցաւ, որովհետեւ Լեզք մոլովը անագին ազմուկ հանեց եւ մատնութեան դիմեց: Այսպիսով զէռ տարին չը լրացած, կարծեմ 33 համաք աւելուց յետոյ դադարեց կսովկասաք:

Հ. ՏԵՐ-ԱՍՏՈՒԱՅԱՏՐԵԱՆ.

(Շարունակելի)

\*) Հայ խոսքը ըստ Բագմուշովի ծագում էր հայկուն՝ անասուն խոսքից: Ըստ հայերէն մի հայապաշտական արտայայտութիւնն էր և պէտք է դառնութեամբ յիշենք որ դա առաջին հայապաշտն էր որ մամուլի միջոցով հայհոյեց հայաթեանը և. Հեղ.